

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան ... 14 Ձր.

Վեցամսեայ ... 7 Ձր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյար
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման ստոր
20 սանիքիմ



Լ Ր Ա Գ Ի Յ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆԵ ԶՈՐԵՔՇՈՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՄՅԷ

Rédaction du journal

le vousne

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравунъ

ВАРНА

Գրոշրոշիւնք եւս չեն
տրուիր

Հասկանալի տնտեսական
անցումը չորեքշաբթի «ԻՐԱԳԻՅ» չը
հրատարակուեցաւ :

ՀԱՅՈՒԵԿԵՐՈՐ

Մեր նախորդ թիւով հրատա-
րակեցինք տեղւոյս թաղ. խոր-
հրդայ միամեայ հաշուեկշիւը
[1904 մարտ 6 էն մինչև 1905
մարտ 6] : Այս պաթիւ աւելորդ-
չենք համարեր հոս երկու խօսք
ընել :

Արդի Պատ. Թաղ. Խորհուրդը
իր հրապարակային հաշուետու-
ութեամբ կուգայ լաւ օրինակ մը
հանդիսանալ իր ուրիշ պաշտօ-
նակիցներուն որոնք, գրեթէ ա-
ռանց բացառութեան, մթու-
թեան մէջ կը թողուն իրենց
գործառնութիւնները, հաշուե-
տութեան պարտականութիւնը
անգոհանելով և միեւնոյն ատեն
ջանալով յաւիտեական թաղա-
կաններ մնալ կամ տեսակ մը
միջոցով իրենց գաւառը, արհա-
մարհը հետաքրքրութիւնը ժո-
ղովուրդին որ անբռնաբարելի
իրաւունքը ունի իր բարեպաշ-
տական նուէրներուն ինչ կերպով
մատակարարուիլը գիտնալու :

Այդ հաշուեկշիւին Մուտքին
կողմը նախ աչքի կը զարնէ
նախորդ թաղ. խորհուրդէն մնա-
ցած պատրաստ գումարը (•) Դը-
րամարկի մէջ 1 ֆր. 74 սնդ.
և այս պատկառելի (•) գումարը
կաւելնայ Ռումանիոյ և Ռուսիոյ
մէջ Տէր Սարգիսի ձեռքով հա-
ւաքուած 8-10 հազար ֆրանգէն-
այնպէս որ այդ նախորդ թաղ.
Խորհուրդը միջոց չունենար ոչ
եկեղեցւոյ և ոչ վարժարանի
նորոգութեան համար սանդիմ
մը ծախք ընելու և գամ մը գա-
մել տալու ու նոյնիսկ կալուածա-
կան տուրքերը վճարելու :

Այդ հաշուեկշիւին Ելքին կողմը
կը գտնենք 713 ֆր. 80 սնդ. մ.
հին տուրք վճարուած կառավա-
րութեան նախորդ թաղ. խոր-
հրդոյ օրէն մնացած, 1896 էն
1904 տարիներու համար : Նաև

1430 ֆր. երկու վարժարանի
նորոգութեան ծախսուած. մինչ-
դեռ այս նպատակով եղած հան-
գումակութեան գումարը հաշիւ
1272 ֆր. ի հասած էր : Իսկ մէկ
տարուան շրջանին Հոգաբարձու-
թեան վճարած է 4014 ֆր. :
Եւ այդ ամէնէ և ուրիշ բացառիկ
ծախքերէ ու վճարումներէ զատ
սնտուկին մէջ պատրաստ դրամ
կը գտնուի (մարտ 6 ին) 338 ֆր. :
Վերջապէս ուշագիւր ակնարկ
մը սեւեռել կը բաւէ այդ Հաշ-
ուեկշիւին վրայ ըմբռնելու հա-
մար թէ ներկայ թաղ. Խորհուր-
դը որ աստիճան խղճմտութեամբ
վարած է իր պաշտօնը, իսկ յե-
տադարձ վերջիշում մը երբեք
բաղդատութեան եղի չպիտի կըր-
նայ գտնել նախորդ և ներկայ
Թաղ. Խորհուրդներու գործառ-
նութեանց մէջ :

Հոս աւելորդ է եկեղեցւոյ
ներքին և արտաքին շքեղու-
թեանց մասին եղած նոր ձեռ-
նարկութիւններուն վրայ խօսիլ,
քանի որ դեռ երէկ Ս. Զատիկի
օրերուն, ժողովուրդը տեսաւ
չօշափելիօրէն և համոզուեցաւ թէ
նախորդ տնաւեր թաղականու-
թեան յաջորդած է տնայէն թա-
ղականութիւն մը :

Ուստի այս առթիւ խմբագրու-
թիւնս պարտք կը զգայ հրապա-
րակային շնորհակալութիւն
յայտնել ի դիմաց Վառնայի
հայ հասարակութեան, ներկայ
Թաղ. Խորհուրդոյ բոլոր անդամոց
որոնք դիտցան իրենց շուրջ
խտացող ժողովրդական համակ-
րութիւնը վարձատրել օրինակե-
լի գործունէութեամբ մը : Իսկ
մենք զմեզ երջանիկ կը համա-
րենք ներկայ թաղականութեան
կազմութեան համար անցեալ տա-
րի մեր թափած ջանքը այսպէս
արդիւնաւորուած տեսնելով :



ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Շուրջ երկու տարի առաջ
պուլկարահայ մամուլը խիստ
գովելի ջանքեր ցոյց տուաւ Տ.
Ներսէս եպ. Ալալանեանի Պուլկար
հայ գաղութի համար առաջնորդ-
ընտրուելու մասին, երբ Պատ.
րիարք—Սուլթանի կողմանէ բե-
կանեցաւ այդ ընտրութիւնը մեր
մամուլն ալ կարծես իրեն հա-
մար այդ օրէն բեկեալ նկատեց
Առաջնորդական հարցը : Մամու-
լը որ կոչուած է ժողովրդական
շահերն միշտ ի նկատի ունենալ,
հաւաստի ենք թէ, կըշտապէ ներ-
կայացած պատեհութիւններէն
ալ օգտուիլ առաջնորդել ժողո-
վրդեան : (*)

Ուրախ ենք լսել այժմ թէ,
կովկասի մէջ մեզ շոյելու քա-
ղաքականութիւն մը յառաջ կը
տարուի, և անդին ալ Տ. Ներսէս
եպիսկ. Ապահունի կընդվզի Սուլ-
թան-Պատրիարքի խտրութեանց
հանդէպ և կապաստանի ի Գա
հիւրէ :

Ուրեմն ոչ նուազ լաւագոյն
գործ մը կատարած պիտի լինի
մամուլը եթէ հրաւէր կարգայ
ժողովրդեան քուէով ընտրուած
հայ պատգամաւորներուն որ
փութան իրենց առկա թողու-
ցած պաշտօնն ի գլուխ հանել :
Քանի որ Տ. Ներսէս եպիսկոպոսի
ընտրութիւնը չը յաջողեցաւ,
ջանան գէթ յաջողցնել այժմ
Տ. Ներսէս եպիսկ. Ապահունի ընտ-
րութիւնն իր առաջնորդ Պուլ-
կարահայերուն համար :

ա.) Պատգամաւորք յանուն
Պուլկարահայ գաղութին դիմեն
Էջմիածին Վեհ. Ս. Հայրապետին
պարզեմ լրտես Օրմանեանի և
Դրան հակազգային վերաբերում-
ները զոր ունին հայ գաղութին
հանդէպ և խնդրեն կարգել մեզ
համար առաջնորդ Տ. Ներսէս ե-
պիսկոպոս Ապահունին :

(*) Իրաւունք ի ընթերցողները կը
հաստատեն թէ մենք երբեք չենք թե-
րացած այդ պարտականութեան մէջ :
ԽՄԲ.

բ.) Դիմեն նոյնպէս Տ. Ներսէս
եպիսկոպոսի յայտնելով ժողո-
վրդեան փափաքը որպէսզի վաղ-
օրք ուրիշ գաղութի մը հետ չը
պայմանաւորուի :

գ.) Ըստ մեզ, այս ընտրութիւնը
իր անպատեհութիւնները չունի,
Վեհ. Ս. Հայրապետը կարող է
հրամայել Տ. Ներսէս եպիսկոպո-
սին, և խնդրել Ռուսաց կառա-
վարութենէն որ ընդունել տան
նաև այս ընտրութիւնը Պուլկար
կառավարութեան :

Յիշեալ եկեղեցականը ըստ
բաւականին կարող փորձառու,
զարգացեալ և ազգասէր կղերա-
կանի մը համբաւն չինած է, և
այս առթիւ մամուլն ալ իւր է-
ջերը պիտի բանայ բնականա-
բար բոլոր այն ամէն անկողմ-
նակալ քննադատներու համար
եթէ երեւան գան, որպէսզի Վա-
հան չվարդապետ Յակոբեանէ
մը փախուստ տուած ժամանակ-
նիս նոյնանմանի մը պիտի փա-
րած չը լինինք :

Այս առթիւ խնդրեմ ընդու-
նեցէք Տէր խմբագիր, յարգա-
նացս հաւաստին :

ԳԱՂԹԱԿԱՆ

15 Ապրիլ 1905

Վառնա

Յ. Գ. Օրինակ մ'ալ «Երաժշտութի»
շրկուած է հրատարակելու խընդ-
րանօք :

Նոյն

ԲԱՂԱԲԱԿԱՆ

Արարական ապստամբութիւնը այ-
սօր ծանրապէս կը զբաղեցնէ Սուլ-
թանը և իր նախարարները : Եւ-
մէնի մայրաքաղաքը եղող Սահասն
գրաւուած է ապստամբներէ : Վային
և ղենուորական հրամանատարը գե-
րի առնելէ յետոյ դանդաղ ազատ ձգած
է արաք ապստամբապետը, բայց թուրք
բանակին բոլոր թնդանօթները ղէն-
քերն ու միկրքն այսօր Արաքսե-
նեւուն ձեռքը անցած են, որոնք
մատղիր են Հիւսիսի գլխաւոր քա-
ղաքները, Մէքքէն ու Մէտինէն ալ
զրաւել և Երաքիոյ անկախութեան
հետ Մէքքէն չէրիֆին Խալիֆէութեւ-
նը հռչակել :

Անկախ Արարիւ մը ստեղծուիլը Սուլթանին այնչափ մտաւանդութիւն չը պատճառեք, որչափ իրաւի- ֆէնթիսնէն զրկուելու երկիւղը . ինք թէեւ այսօր միայն 16-17 միլիոն իսլամներու կը տիրէ . բայց կրօնական տեսակետով 300 միլիոն իսլամներու հոգեւոր պետն է եւ այս է որ իր մեծագոյն փառքը ու պարծանքը կը կազմէ եւ իրեն երազել կուտայ ապագայ համալսման անհրաժեշտութիւն մը բոլոր աշխարհի վրայ : Չենք գիտեր թէ ինքն Համիտ որչափ կը հաւատայ այս երազին , բայց սա որոշ գիտենք թէ իր միաժամ ու սգնաւոր կրօնակիցները այդ երազով կ'օրորէ :

Արար ապստամբներու գէնքի յաջողութիւնը կը սպառնայ Սուլթանը այդ փառքէն զրկելով իր երազները օդը ցնդեցնել . ահա այս պատճառաւ Երլուզլի մէջ սարսափը տիրապետած է , եւ նախարարները արտակարգ նիստեր կ'ընեն զարման մը գտնելու համար . բայց արաբական աշխարհին մօտէն ծանօթ եղող թուրքերը անկարելի կը տեսնեն մօտ օրէ ապստամբութեան նուաճումը եւ Եթէնը թուրքերոյ համար ձեռքէ ելած կը նկատեն :

Մինչ Արարիոյ մէկ կողմը այդ վիճակին մէջ կը գտնուի , միւս կողմէ Անգլիացիք Պարսկային ծոցէն առաջնաւորով , Պարսկայի եւ Քուէթի եզերքները կամրացնեն ու հոն տեղակայուելու կը պատրաստուին :

Պարսկայի կուսակալը հեռադրաւ այս լուրն ալ հաղորդած ըլլալով , Դուռը հարկ դատեց Լոնտրաէ բացատրութիւն պահանջել :

Իտալիոյ նախարարար Մ. Թիթոնի հետ Աւստրո-Հունգարիոյ նախարարար Կոմս Կոլու խօսքի վիճակին մէջ վերջին տեսակցութիւնը համախառնային մամուլը կը զբաղեցնէ այս օրերս : Թէեւ յայտնուած կարծիքները այլազան են եւ տեսակցութեան նիւթը գաղտնի պահուած է , բայց ընդհանրապէս կը

կարծուի թէ մակեդոնական եւ ալ պանական խնդիրներուն վրայ դարձած է անոնց խորհրդակցութիւնը : Իտալիան Ալպանիոյ մէջ իր ազդեցութիւնը զօրացնելու համար , երկար տարիներէ ի վեր ոտնձգութիւն մը կուզէ փորձել . այժմ որ ալպանական շարժումները երկիրը անխիստութեամբ մատնած են , իտալիան զայն խաղաղեցնելու պատրուակին տակ էր ջանայ հոն ոտք դնել , երբ ասդին Աւստրիան մակեդոնական նահանգներուն մէջ բարենորոգիչի անուանի տակ իր սպանները օրէ օր կ'աւելցնէ օրին մէկն ալ Սէլանիկը գրաւելու պատրուակ մը որոնելով , որ կարծենք չպիտի ուշանայ , եթէ ներկայ խռովութիւնները քիչ մը աւելի բարբոթուին : Ահա այդ երկու զինակից պետութիւնները այս նպատակներով տուրքուած , հարկադրուած ըլլալ կը թուին համերաշխութիւն մը գոյացնելու իրենց մէջ դիւրութեամբ ներպատակնուն հասնելու համար :

Վերջին եօթնակին մէջ ուսածաբական պատերազմին վիճակը նոր փոփոխութիւն մը չէ կրած ոչ ծովային եւ ոչ ցամաքային տեսակէտով : Մովակալ Բոթակաթլիէն Նաւատորմիդ տակաւին չէ միացած երրորդ տորմիդին , հակառակ անցեալ շարժում տրուած հաւատարմութեան . նաեւ յիշեալ ծովակալին նաեւը զեռ կը տատանին Հնդկաստան ծովին մէջ . բայց այս անգամ զանազան կողմերէ կը հաւաստուի թէ ուս տորմիդները Փիլիպին կղզիներու ջրերէն անցնելով , ովկիանոսի բացերէն ուղղակի Վատիկանի վրայ կ'ընեն : Այս լուրերէն կարելի է հետեւեցնել թէ Բոթակաթլիէնը կը զգուշանայ նեղ ջրերու մէջ ճարտարական տորմիդէն զիմաւորութիւն :

Փալով ծովակալ Թոկոյին , այս հերոսը մեղ անծանօթ խորամանկութիւններով իր տորմիդին ուր գտնուիլը զաղտնի կը պահէ . թէեւ անցեալ շարժումը քուսեցաւ թէ ճարտարական մարտանաւերը Թորմոզա կղզիին

առջեւ կը համախառնուին , եւ այդ լուրերուն վրայ ընդհարումը մօտ կը նկատուէր , բայց քանի որ այսօր ուս տորմիդները ովկիանոսի բացերէն անցնելով Վատիկանի վրայ յարձակում են , ծովամարտը կրնայ յապաղել անորոշ ժամանակի մը համար : Մովակալն երկու թշնամի ուժերու այս տատամստ եւ խուսափողական ընթացքին կը համապատասխանէ ցամաքային ուժերու սպասողական վիճակը : Օհամա եւ Լինէվիչ , երկու սպարապետներն ալ առ այժմ կը զգուշանան նախադրածակ ըլլալէ . Լինէվիչը զգուշաւորութեան պատճառը պարզ է , նա օր չահիլ կուզէ , որպէսզի թշնամի բանակին ուժը հաւասարակշռող նոր օգնութիւններ ստանայ . բայց Օհամա որ այսօր գերակշիռ ուժ մը ունի , ինչու ժամանակի կը կրօնցնէ , երբ այդ ժամանակի կորուստը թշնամին զօրացնելու պիտի ծառայէ : Այս հարցումին կը պատասխանուի թէ այդ հին աղուէսը հանդարտութեան սա երեւոյթին տակ մեծ թակարդ իր կը լաւէ Լինէվիչի դէմ , ինչպէս ըրաւ Մուգաէնի առջեւ Գուրոթաթլիին դէմ :

Ռուսիոյ ներքին վիճակի մասին աւագ շարժում հասնող լուրերը շատ փոքրիկ էին . կը սպասուէր որ Ձատկի տօններուն մեծ յեղափոխութիւն մը ծագի երկրին մէջ : Այդ երկիւղը կը տիրէր ամէն կողմ եւ այս պատճառաւ կառավարութիւնը անդորրացուցիչ յայտարարութեամբ մը սպառնացաւ յեղափոխականներուն թէ ցոյցներու մասնակցողներուն գէնքով պիտի պատասխանուի առանց խնայելու : Եւ Ձատկի խաղաղ անցաւ գրեթէ բոլոր Ռուսիոյ մէջ , բացի Լեհաստանի մայրաքաղաքէն , ուր ժողովուրդը զինուորներուն հետ նոր ընդհարումներ ունեցաւ եւ կրկին 90-100 զոհեր տրուեցան :

Կայսերական իւրազ ին համաձայն բարենորոգման նախապատրաստութիւնները զանգագորէն առաջ կը տար-

ւին : Տեսակ մը երեսփոխանական ժողովի կազմութեան համար ծրագրերը կը մշակուին : Կրօնական բարենորոգման համար կազմուած յանձնաժողովը ոչ-օրթոթոք քրիստոնեայ դաւանութեան համար կարգ մը իրաւունքներ եւ արաժեշտութիւններ ծրագրեց , որոնք ցարդ զլացուած էին . եւ Ձարկ վաւերացուց յանձնաժողովին այդ որոշումները : Նոյնպէս իսլամ հասարակութեան ինչ ինչ թոյլտուութիւններ որոշուած են : Լեհաստանի նախակրթարաններուն մէջ լուս. լեզուն պարտաւորել ընելու պահանջը ջնջուեցաւ . կը սպասուի որ նոյն թոյլտուութիւնը կովկասի փոխարքայ Վարդգիւ Սալքի իշխանը կը խոստանայ եկեղեցական կալուածներու խնդրոյն հետ զգործակալ խնդիրներն ալ կարգադրելու հայոց գոհացում տալ . բայց որ աստիճան գոհացում պիտի տրուի , այս առ խոստ անորոշ է :

ԵՐԵՒԱՆԻ ԴԵՊԻՍԻՏ

Տիպիս 10 Ապրիլ

Պագուի կոստրածները զգալիորաբար կըսկսին իրենց արեւմտի հետեւանքները ունենալ կովկասի ուրիշ քաղաքներուն մէջ ալ : Այս անգամ Երեւանի մէջ , որ հայոց եւ իսլամներուն մեծ կեդրոնաւորը մըն է , խռովութիւններ ծագեցան : Թէեւ հոս ալ ինչպէս կովկասի բոլոր կողմերը ոչ տնտեսական եւ ոչ բարոյական ո եւ է հակառակութիւն չկայ հայ եւ իսլամ տարրերուն մէջ որոնք միշտ լաւ յարաբերութեամբ ապրած են , Պագուէն հասած գէշ լուրերը անոնց մէջ տեսակ մը փոխադարձ անվստահութիւն ստեղծեցին : Եւ ինչպէս Պագու նոյնպէս Երեւանի մէջ վատ եւ չարագործ անձեր , նախանձորք եւ հայատեաց պաշտօնեաներ չը թերացան այս յարմար

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՆԵՐ

24

ԿԱՐՄԻՐ ԺԱՍՈՒՑ

(Շար. նախորդ թիւէն)

2

Ընելիքին վրայ բանտին մէջ երկարօրէն խորհեցաւ : Թրքերէն լեզուին թէեւ անընտել , բայց իր յատարարութիւնները կարող էր պարզօրէն բացատրել : Սակայն դատաստանին օրը երկարաբանելու պէտք չուրեք : Իրմէն առաջ Ռչտունին խօսեցաւ : Դատաւոր , ժողովուրդ , ամբաստանեալ , ամբաստանող , ամէնքն ալ սարսեցան այդ վրիժառու ձայնէն : Երբ ինքնապաշտպանութեան կարգը տէր Յուսիկին հկաւ , անիկայ պարզապէս պատասխանեց :

— Ռչտունի էֆէնտին պէտք եղածը արդէն ըսաւ : Իրեն ձայնակից եմ : Աւելցնելիք ուրիշ բան մը չունիմ :

Երբ բանտ վերադարձան , աէր Յուսիկ Ռչտունիին ձակատը պաղաւ ուրախութեան արցունք ներսով :

Ամէնքն ալ մահուան դատապարտուեցան , բայց նահատակութեան հինգ կարեւոր միայն սրժա-

նացան : Անոնք իրենց ձեռքովը մահմետականին արեւը թափած էին : Միւսներուն պատիժը մըշտնջեական բանտարկութեան փոխուեցաւ : Եւ միւսներուն Պոլիս բերուելով , ոմանք հոն քանտրը զեւտեղուեցան , ոմանք ալ բերդաքաղաքները խըրկուեցան : Այս վերջիններուն մէջ էր տէր Յուսիկ :

է

Յուլիս 15 ին Կ. Պոլսոյ վարչական գրութեան մէջ մեծ փոփոխութիւն կը մտնէր : Կեդրոնական ոստիկանութիւնը , որ մինչեւ այդ ատեն երկրորդական դերը ունէր , յանկարծ ամենամեծ կարեւորութիւնը կը ստանար հայկական վտանգին ազդած սարսափին : Անշուշտ պաշտօնեայ երիտասարդ մը , մէկէնիմէկ ոստիկանական նախարարութեան կողմէն , պիտի նկատէր հետզհետէ իր գերիշխանութեանը ներքեւ առնել մինչեւ իսկ սատրապին ու ներքին գործերու նախարարը , որոնց ստորադասեալ պաշտօնեան կը մնար ըստ վարչական կարգ ու կանոնի : Հինաւուրց փայտներուն անհանդուրժելի էր իրենց վրայ ծանրացած այս հակողութիւնը : Այդ նախարարները միանգամայն կը վախային , թէ ոստիկանութեան նոր պետը , փառատենչիկ զգացումներէ մղուած , հայկական խնդիրը կարող բերքել , ստեղծելու համար կնճառ կացութիւն մը , որուն բոլոր հանգոյցները իւր ափե-

րուն մէջ առնելով , յաջողէր մինչեւ վեղիբուլթեան բարձրանալ : Ուրիշներ ալ կը կարծէին թէ , այդ նոր նախարարը իբր ազատամիտ հօր մը որդին եւ իբր մտերիմ մը Երիտասարդ Թաւրքեուն , սրտանց կը համակրէր երկրին մէջ ծագած ամեն շարժումը : Դիւանական քաղաքական նուեմամբ մը իր պաշտօնէն պիտի օգտուէր հայկական վրդովումները բորբոքեալ պահելու համար , որպէսզի անխուսափելի դառնայ եւրոպական միջամտութիւն մը , որմէն միայն կարելի է յուսալ թիւրքերոյ բարեկարգումը , ուստի եւ փրկութիւնը : Փառաբարկութիւն ու հայրենասիրութիւն կրնային իրենց փոխադարձ շահերը համերաշխել : Բ. Դրան մեքենայութիւնները ըսկան , տապալելու համար ոստիկանութեան երիտասարդ նախարարը , բայց անիկայ չնորհիւ քաղաքներուն մտքին ու Երլուզլի ունեցած պաշտպաններուն , իր ազդեցութիւնը օրէ օր աւելի կընդարձակէր ու կամրապնդէր : Փայաւնեքէն ոմանք մտաբերեցին հայոց Պատրիարքարանը եւս գործիք ընել , իրենց հակառակորդին տապալումին դիւրացմանը համար : Այս նպատակաւ ձեռք առին Հայրապետ էֆէնտին :

Թիւրքերուն հետ հայուն հնաւանդ վարուողութեան այս մարմնացումը , կը շարունակէր նաեւ այն հին քաղաքականութիւնը , որով հայերը կը մասնակցէին երկրին բարձրագոյն վարչութեան մէջ կազմուած շահախնդրական կամ քաղաքական

առիթմի մասին զգուշացնելու համար վաղուկ կ'սկսեն շինուել և սուտ լուրեր տարածելով որպէս զի այդ երկու ժողովուրդին յարաբերութիւնները աւելի զիշահան :

Այդ վատ դերակատարներէն մասնաւորապէս պէտք է յիշել Ռուսագոֆ անուն ծանօթ հայաստանց ռուս բրժիկը որ իր ոճրագործական ընթացքին փոխադրելով իր արիւնջով վճարեց իր նախնի հայուն մը արդարագործ ձեռքին տակ : Բայց դժբաղդաբար Նաքարիշէի և Ռուսագոֆի նման զրգրէլ ու թիւղորէլ գործած կանգնուել թիւր խիստ մեծ է :

Թիւրիմացութիւնները ուղղելու և կատարեալ հաշտութիւն գոյացնելու համար հայ կղերականներու և հայ ու թաթար երեսկներու միացեալ ջանքը ապագային անհրաժեշտ ամբողջին ծայրայեղ արհեստիւն և արիւնքաբեր ընդհանրութիւն կողմէ չափազանց զրգուշացած մեղմունքով հայտնի չնորհի :

Այսպէս, փետրուար 20-ին, Պագուրի կոտորածէն զերեք երկու շաբաթ յետոյ, հաշտութիւնը հաստատող շատ մը ցոյցներէ վերջ, զինեալ թաթարները անպատիւ կերպով յարձակեցան Հայերուն վրայ ասոնցմէ 9 մարդ սպաննելով և վրաւորելով : Այն դէպքէ՝ թէ այս ջարդոգները ելած էին միշտ ամէն տեսակ շարագործներու սովորական ապաստաններ եղող յայտնի թաթար սրճարաններէ՝ ոչ մէկ կասկած չէր թողուր այլ պատահարի բնոյթի մասին : Բայց որչափ կերպով կը յայտնուէր թէ վարպետ և ոճրագործ ձեռք մը կը մղէ այդ աւաղակները խռովութիւններ հանելու որով կարող ըլլան զիւրութեամբ ընդհանուր կոտորած առաջ բերել ոչ միայն քաղաքին մէջ, այլ ամբողջ հայաստանի մէջ :

Նոյնպէս բարկութիւնը մեծ եղաւ հայ ժողովուրդին, որ բարեմտութիւնը ունեցած էր հաւատարմութեամբ զգացումներուն որոնք զեռ քանի մը օր առաջ թաթարները արտաքայտած էին եղբայրական ցոյցներով :

Հայ եկեղեցականները և երեսկները մեծ զօնարութիւն կրեցին Հայոց կողմէ վրէժնորթութեան հոսանքը ազդելու : Անոնց կողմէ, ողջամիտ թաթարներ, հաստատելով թէ իրենց կրօնականներուն ընթացքը ոճրագործական է, կրկին յայտնեցին իրենց բացարձակ համեմատութիւնը Հայերուն հետ և աշխատեցան իրենց կարողութեան չափով հանգարտեցնել կրթեցու գլուխը : Երկրին հայ եկեղեցիքն և ինչպէս մզկիթն մէջ հաշտութեան և խաղաղութեան տեսարաններ պարզուեցան, կրկին երկու ժողովուրդն անբաժանելի ընդհանրութիւն դարձաւ : Բայց իրենց միջև լուրջ հակասութիւնները քով քով հանգարտուող թաթար կազմած քաղցին փողոցներու մէջ անբժեղով շփարակուելու որ գոտիութեան սերման էր բարի դրացիներուն միջև : Հանդարտութիւնը վերահաստատուեցաւ :

Հետեւեալ օրը, փետրուար 21-ին, խառնութեան բացուեցան, ամէն ոք իր գործը վերսկսաւ : Կը կարծուէր ամենը վերջացած է, ժամը 11-ին ատենը խառնակութիւն մը ծագեցաւ շուկային մէջ, յորում շատ մը հայեր կը սպաննուէին թաթարներէ : Անմիջապէս խառնութիւնը գոցուեցան : Այս անգամ անողտ էր արգելիլ Հայերը զէն ի ձեռքն պաշտպանուել յարձակողներուն դէմ, որոնք, կուրացած կատաղաբան առաջնորդներէ, չէին ուղեր խօսք հասկնալ խաղաղական միջոցներով : Այն ատեն ստոյգ կոբէ մը տեղի ունեցաւ շուկային մէջ և ուրիշ կողմեր : Կոտորող թաթարները ամէն կողմէն մղուելով ու հետապնդուելով ձգեցին փողոցներուն մէջ 25 մեռելներ և վրաւորներ : Հայոց կողմէ ալ 10 հոգի զոհուեցան :

Հայոց այս ուժեղ ու վճռական ընդդիմութիւնը թաթարները խոհականութեան բերաւ և երբեք հաշտութիւնը տեղի ունեցաւ, կը յուսանք թէ այս վերջինը լլլայ :

Այսպէս, այն երկուքէ՝ թէ Պագուրի կոտորածը օրինակ կըրնայ վարակիլ ըլլալ կողմասի միւս քաղաքներուն՝ իրականացաւ դժբաղ-

դապէս : Եւ երեսուն դէպքեր, թէ և յաւաք կարեւոր զոհերով ընդունին տեսակետով, սակայն ահաւոր նշանակութիւն ունին : աներկբայելի ցոյց կուտան թէ խառն ոճրային ջանք մը ի գործ կը դրուէր զոհուելու համար Պագուրի մէջ Նաքարիշէի միջոցաւ վառուած հրդեհը : Ապրին, քրիստոսի խոստովանութեամբ մը է կը դրուէ թաթար ամբողջ ինչպէս Շուշիի մէջ : անգին, վրա կատաղաբեր մը՝ ինչպէս Եղիսաբէթում պոլի մէջ : ուրիշ տեղեր, կատաղաբեր անձամբ, ինչպէս Պագուր, որ կը կատարէ այդ արտաքայտը : Ամէն տեղ այս մարդիկ իրենց համարած ունին Պետութեան փոքր պաշտօնականներ, գրեթէ բոլոր նախանորդ բնակեցողները և օրիշ Վրդիւնի Մոսկովսկի-Վեոսովսկի օրաթերթներուն : Եւ զարմանալի չպիտի ըլլայ երբ իմացուի թէ ժողովրդական վրէժնորթութիւնը կը դադարէ այս մարդոց զէմ որոնք կոտորել տալով Հայերը, Հրեաները, ուսանողները և միջին ուսուցիչները, ուսանողները և միջին ուսուցիչները :

[Բնո Արմէնիա]

ՆԱԽԱԿ ՊԱՐՍՍԱՍԱՆԷ

ԹԱԽԻՉ 28/10 Ապրիլ

Կալով Բագուրի կոտորածների Պարսկաստանում արձագանք տալուն, զոհն մեր քաղաքում աղքատիկ և հոգեւորական դասը հինգ սկզբի օրէ շատ լուրջ ըմբոսնեց գործի էութիւնը և թէ ուժ պէտք էր վերագրել պատճառը, բայց և այնպէս հասարակ շատ մէջ խլրտուեցին շատ կային, մանաւանդ Մուհարրէմ ամսին (Պարսկերէնի սոյն օրերին) բայց և այնպէս շատ հանդիստ անցան,

իսկ մենք արդէն սպասում էինք մի այդպիսի օրուայ, մանաւանդ մեծ : Իսկան թագաւորանդի քաղաքից մէկը ներու օրերում : Նախ քան մեծ խուշ տէրից Եէյի Մամադադ ցու մահուան հետապնդուելու այստեղ հասնելուց յետոյ պարսկերէնը վերանց մի կիթներում հոգեւորական կատարեցին, իսկ հայերն էլ իրենց ծախքով մի մզկիթում, ի հարկէ նախօրոք թաւրիղի մեծ Մուհարրէից իրաւունք ստանալով, հոգեւորական կատարեցին Պարսից հոգեւորականների ձեռքով Նաքարիշէի մէջ Մուհարրէի համար, որով ապացոյցեց մի անգամ ինքն, որ այդ դատաւոր հարեւան ժողովուրդները միմեանց հետ միշտ եղբայր և բարեկամ են : Իսկ Պարսկերէնի այն դասը, որ պատր քրտմ ուղղում էր ձուկ որսալ, բոլորովին հիպոթիպուեց : Աւստի՛մ այստեղ շատ հանգիստ է :

Ս . Ա .

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՐՏԱԶԱՆՅԱՆԻՔԻ

Ստիպման կը հրատարակեց հետեւեալ անձներու անունները : որոնք տարինեքով թերթ ստանալ և զեղծուղիթ բողոքի եւ այլ ծախքերու ենթարկելէ յետոյ անհաղձութիւն ունեցան թերթիս քամակներէն չը վճարելու : Ամերիկայի պէս բարեկեցիկ երկրի մը մէջ ապրելով հանգերձ :

- Գրիգոր Նաղուպիան—Ամերիկա—Փայլ Զաքար Սարգիսեան Բոսթօնէն
- Հայ Գրագործան—Արմեն Սարգիսեան—Նիւ-Պորթ
- Սարգիսեան—Նիւ-Պորթ
- Մ. Գրիգորեան—Մատիւս Մէ.
- Իրիթ Գրիգորեան—Պատրիսիո Սէմուէլ Տ.Վարդանեան—Բոսթօնէն
- Յ. Գարակէօզեան—Հալեօք Վահան Միստիսեան—Հիւսթըն
- Յ. Պ. Օղկատեան—Նիւ-Պորթ
- Ժ. Սոգեան—Նաքարիշէ
- Մկրտիչ Թոմասեան—Լ. Ուսթիլ-Թոմ
- Մանուկ Պ. Գալուսեան—Լ. Ուսթիլ-Թոմ

հայերը իրենց հնարամիտ խելովը, զրամական ուժովը և նպաստաւոր ուրիշ պարագաներու ազդեցութեամբ կը զիւրացնէին բարձրաստիճան պաշտօնատարներու բարձրացումները և անկումները : Օրթագեղարանէ Էֆէնտին ալ՝ որ հակուտիկականական փաշաներուն գաղափարակից մըն էր, ինչպէս և շահակից մը, օգտուեցաւ Պատրիարքարանին վրայ իր ունեցած ազդեցութենէն նոր դէպքերուն պատճառաւ այլեւս անսահման, որպէսզի զիւրացնէ սատրապանին ու ներքին գործերու նախարարին խորհուրդներուն յաջողութիւնը : Եւ անա Պատրիարքարանէն դանդաղեց սկսան տեղալ Դուռը և Երջողը, ընդդէմ օտարկանութեան նախարարին : Ու եկաւ օր մը որ Արքեան Պատրիարքը կառավարութեան վերջնապէս մը տուաւ : Կամ ինքը պիտի հրաժարէր կամ օտարկանութեան նախարարը : Բայց Սուրբանը երկուքն ալ իրենց պաշտօնին վրայ պահեց : Զապրիկ միջոցին քաջատեղեակ էր իր զէմ լարուած մեքենայութեանց զլխաւոր դուռը : Գրեթէ անձնատուութեան : անոր ջանքախումբը ծրարակցեց, բայց սպասելով բարեպաշտեան առթի մը, որ կրնար ներկայանալ ուշ կամ կանուր : Շատ ջանքաւ, նախարարական փոփոխութիւններ տեղի ունեցան : Նոր զահլիճ մը կազմուեցաւ : Ասալ հաշտ աչքով չէր : Գրեթէ օտարկանութեան ամենազղեղիկ պետը, բայց կը զգուշանար անոր զէմ կուռելէ : Հայ Էֆէնտին ալ համար կերպեցաւ Դրան նոր քաղաքականութեան :

Ու հայկական դէպքերը իրարու կը յաջորդէին երեսակայութիւն արտադրարագութեամբ : Պատրիարքը ու վարչապետ չըմհաններու զոհ կերթային, երկրէն պայթումներու որոտներ, Սասունը հայկական խնդիրը կը վերաբանար : ու Պերլինէն տամսութ տարի ետքը պետութիւնները հայոց դատին տէր կը կանգնէին : Այս բոլոր նորատեսիլ երեւոյթները պահպանողական հայր կը շուարեցնէին : Այլեւս նաւապետը էր, որ կողմնացոյցը կորուսեցուցած է : Մերթ՝ կը տաքնար, կողմնորէր կը յուսար : մերթ՝ կը սմբէր, տարակուսանքներէն չլուտուած, թիւրքերը աղէկ ճանչնալուն «այս, կըսէր, թիւրքը նապաստակը կառքով կորսայ : վախճում թէ հախերնուս գան » : Սկստեմբեր 18-ին ցնձաց : սխալած ըլլալուն ուրախութիւնը ունեցաւ պահ մը : Տրագիկոնի կոտորածին լուրը առած օրը, երկու ձեռքը գլխուն գարկաւ : Զարեհեան գոտեքը, իրարու ետեւէ արագավաղ, իր բոլոր վախերը կիրակացնէին : Ու փրկուեցան աղօտ նշոյլ մը չէր ընդհնարներ :

—Այն, ճանիւղէն ճանիւղեր, կը կողկողէր, ժառերիներուն հետ յեղափոխականներուն վրայ խօսած ատեն :

Իրիկուն մը, 1895-ի վերջին օրերը, Հայրապետ Էֆէնտին չըմհանէն ելլելուն, երբ Օրթագեղի շուկայէն կանցնէր, մոխրաւոր իր գինեաւուն

նէն դուռն ցատկելով, ընդ առաջ եկաւ, զէմքը աչալալած : Բարեւը խոնարհարար տալէ յետոյ, ըսաւ .

—Էֆէնտի, ծառանդ ալ հիմակ ձեզի պիտի դար : Նոր բան կայ :

Ու կամացուկ մը փախաց, թէ ոտքի կանուրութիւնը ցոյցելլալ տուն մը խոնարհարարութեամբ ընդունուեցաւ :

—Ինչ կրես, գոչեց Էֆէնտին, զեկ զեզին կտրած :

Մուրթարը եղելութիւնը պատմեց : Նոյն օրը Սթամպոլ Օրթագեղի մը ձեռքաւորութեամբ Եր : Զէյթունի համար հանգանակութիւն բրտած ըլլալու ամբաստանութեամբ : Երիտասարդ գանահարումին չգիմանալով, իմացուցած էր հանգանակած դրամը ու նուիրատուութեանց թուղթը Օրթագեղ վարժուէի երկու քոյրերու տուն պահած ըլլալը : Ոտարկանները երիտասարդը կոտորով զեղ բերած էին : Օրթագեղներն իմացուեցան ամէն ինչ օրացեր էին, բայց ի լուր երիտասարդին աղաղակներուն թէ զինքը ձեռքաւոր պիտի ապանեն, հարկապարտ էին ձեղունէն թուղթն ու դրամը հանել և օտարկաններուն յանձնել :

Դէպքը շատ ծանր համարուեցաւ : Հայրապետ Էֆէնտին ալ տուն չգնաց և կառք մը հատուղով շրտակ Պէշիկթաշ վազեց : Հասն փաշայն ալ արդէն իրեն մարդ խրկած էր, ու կոպակը (Շարուհակիլ)

Յ. Մանուկեան—Շիրազ
Յ. Ա. Յակոբեան—Լիւն
Սիմոն Աղամեան—Հեղկանտօլ
Յ. Կիւրճեան—Գանատա
Արսէն Մերկեան—Լօռէնս
Պետրոս Մինասեան—Լօռէնս
Յ. Պետրոսեան—Նիւ Պոլիթէն
Ա. Տ. Մարկոսեան—Ֆալմօլէր
Ա. Շաքարեան—Ֆալմօլէր
Յակոբ Գալաֆեան—Տօվէն Ն. Հ.
Նշան Մինասեան—Սանթրալ ֆալ

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻՍ

Ժընէվտէն Էվրոգա կազմա-
լարընա իկպար օլընտըղընա կէ-
օրէ, Սասուն վուգուաթլարընտա
գահրամանլըղը իլէ շէօհրէթեապ
օլան Անգրանիկ Չուիցերիայա
կէչմիշ օլուպ, պիր մուպահասէտէ
շու եօլտա պէյանը Էֆքեար իթ-
միշ տիրւտէվլէթլէրի թիւրքիա
իլլէրինէ միւտախէլէյէ մէնպուր
իթմէք իչիւն էրմէնի գօմի-
թանըլար հարէքէթլէրինի տէ-
վամ իթմէկէ գարար վէրմիշլէր
տիրւտէվլէթլէրի թիւրքիա

—Արապ ասըլար Սանապը
գապթ իտէրէք վալիի վէ աս-
քէր գօմանտանըն տախի Է-
սիր թուրքմուշլար իսէտէ, պիւ
ախէրէ պուշլարը սէրպէսթ պը-
րագմըլար. Շիմտի տիկէր շէ-
հիրլէրի տախի ասըլար մու-
հասէրէ վէ իշխալ իթմէկէ մէշ-
ղուլ տըրլար:

Արապիտանըն աշվալինէ աշ-
նա օլան թիւրքլէր Էնմէն վիւա-
յէթի էլտէն կիթմիշ նազարը
իլէ պագմագտա օլուպ, հոկտեմ
բեր ալընա գատար միւքէմմէլ
վէ ճէսիմ պիր օրտու եօլանըլըր
իսէ պէլքի Սանաա թէքրար կէ-
րի ալընապիւսին տէյօրլար, Ֆա-
գաթ հոկտեմբերէ գատար ասը
լար Մէքքէի վէ Մէտինէի տախի
գապթ իտուպ պիր Արապիտան
տէվլէթի թէշքիլ իտէճէքլէր
կէօրիւնիօր:

—Պասրա վալիսինին Պապը Ա-
լէյէ վէրտիկի թէլէկրաֆ իւղրէ,
տէօրթ ատէտ ինկիլիզ հարպ սէ-
ֆինէլէրի Անէմ քէօրֆէղինտէն
Պասրա վէ Բուէթ սահլիլէրինէ
կիտուպ, օրալարը իսթիհքեաւ-
լարլէ գալիլէշտիրմէքտէ վէ
Էնլիլէյմէքտէ իմիշլէր: Պապը
Ալի պու հալատիսի ալմասը իւ-
զէրինէ, Լօնտրատաքի օսմանլը
սէֆիրի վասիթասը իլէ ինկիլ-
թէրատան իյլահաթ իսթէտի:

—Իսլահաթ իմրասընա սարֆ
իթմէք նամը իլէ 5,000,000 լի-
րա տախիլի իսթիգրազ իչիւն
վիւքէլա մէճլիսի միւքէքէրէ
իտէյօր:

Մալիւմ օլտըղը իւղրէ, թիւրք
լիսանը իլէ «տախիլի իսթիգրազ»
տիմէք խրիսթիան թապալար-
տան ճէպրէն վէ թէհիտիլէ բա-
րա թօրլամագ տիմէք տիրւտէվլէթլէրի թիւրքիա

նի ընտրի սօյկուճըլըգ, Էվլէթ
հէր նէվ ատէպսիլլիքլէ բարա
թօրլանաճագ, ֆագաթ իսլահաթ
ասլա իմրա օլընմալաճագ տըր:

—Մաքէթոնիա գօմիթա ըն-
յիսլէրինտէն ժէնէրալ Յօնչէվ
վօյլօտա Սթօեանօլըն գօմանտա-
սը ալթընտա՝ պիր շէթա Մէրէզ
սանճաղընա եօլլամըշ վէ իմրա
շէգալէթ իտէն Սանգանքիւնի
շէթասը իլէ Մէնլիք քէօյիւնտէ
վուրուշմուշ օլուպ 7 քիշի թէ-
լէֆ օլուրմուշ: պու միւսատէմէ
էսնասընտա թիւրք ասքէրի Է-
թիշէրէք շէթալար տալըլմըշ:
Սթանպօլտան վիւրուտ իտէն տի-
կէր պիր թէլէկրաֆա պիւնաէն,
շէթա ընյիսի Սթօեանօլ տախի
վուրուշմուշ:

Կ Ի Ր Ի Տ

Կիրիտտէքի Էննէպի գօնսօլու-
լարը թէհիտաթլը պիր նօթա
իլէ՝ Էննան պայրաղընը աշաղը
ալուպ, Կիրիտ պանտէրասընը
շէքիլմէսինի հիւքիւմէթի մա-
հալլիէտէն թալէպ իթմիշլէր,
վէ պու թալէպէ ընայէթ օլըն-
մագ իսէ Էննէպի ասքէրլէր վա-
սիթասը իլէ իմրա իթմիլիլէ-
ճէկինի իսթար էյլէմիշլէր:

—Վիւքուա քէօյիւնտէ ասը-
լար՝ 50 ժանտարմալարլէ վու-
րուշտուլար: ասըլարտան 3 քի-
շի էօլտիւ 6 քիշի եարէլէնտի
ֆագաթ ասըլար 14 ժանտարմ
թուրթուպ, հապս իթմիլէր:

Մէքքէր ժանտարմալարը գուր-
թարմագ իչիւն Վէնիշու նամ ին-
կիլիզ վարօրը 70 ասքէրլէ Գան-
եատան հարէքէթ իթմիլ:

Ր Ո Ի Ս Ի Ա

Ջատիկ եօրթուլարը սիւքիւ-
նէթլէ կէչմիշ տիրւտէվլէթլէրի
թիւրքիա վէ վիւայէթլէրտէ Է-
նի հատիսէլէր գուհուր իթմէտի
Էալընըզ վարշաւատա ասքէրլէր
վէ Լէհլէր պէյնիւնտէ իքի միւ-
սատէմէ վուգու պուլմուշ վէ Է-
հալիտէն 90 քիշի գատար թէ-
լէֆ օլմուշ տըր:

—Մէյտանը մուհարէպէյէ կի-
տէճէք Էննի ասքէրլէրի սիւհա-
սըզ շըմէնտըքէրէ գօյուպ եօլ-
լայօրլար, զիրա Էննի թօր-
լանալար Բուսիա տախիլինտէ
իսթիլալ գալտըրըլար տէյիւ
հիւքիւմէթ չօգ գօրգույօր:

—Իսլահաթ գօմիսինը թէտ-
րիլէ իլի իլէրի կէօթիւրմէք
տէ օլուպ, րուս քիլիսէսինէ թա-
պի օլմայան տիկէր մէզնէպլէրէ
պաղը մէզունիլէթ վէ սէրպէս-
տիլէթ վէրիլմէսինի գարարա
ալմըշ, Ջար տախի գօմիսինըն
պու գարարընը թաստիգ իթ-
միշ տիրւտէվլէթլէրի թիւրքիա
պաղը միւսատէլէր կէօթէրիւ-
միշ տիրւտէվլէթլէրի թիւրքիա

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Է

—Ֆէլաւմ. Բրէնս Ֆէրտինանտ
իթալիա գրալը իլէ կէօրիւշուպ
ալտէթ իթմէսինտէ, պիր թէ-
լէկրաֆա քէնտիսինէ կէօթէ-
րիլէն հիւսնի գապուլտան տօլալը
Գրալա պէյանը թէշէքիւրաթ
իթմիլ, Բրէնս Բիւրտա Էթիշ-
մէսինտէ, գըրալըն մուհիպպա-
նէ պիր թէլէկրաֆընը գա-
պուլ էյլէտի, պու թէլէկրաֆլէ
գրալ Պուլկարիա վէ իթալիա պէյ-
նիւնտէքի տօթլըգտան պահս ի-
տէրէք, Բրէնսին պու սօն վի-
լիթասը իքի միւլլէթ պէյնիւ-
տէքի տօթլըղը թագվիէ իթմի
տէմիշ տիրւտէվլէթլէրի թիւրքիա

—Ֆրանսանըն վէ իթալիանըն
պիր չօգ շէհիրլէրինտէ գէրգէ-
լէլէր գուհուր իթմէքտէ օլուպ,
պաղը մահէլլէրտէ պիւնալար տա-
խի Էրգըլմըշ տըր:

Ս Օ Ն Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

Լօնտրատան իչար օլընտըղը-
նա պիւնաէն, րուս տօնանմասը
Գամրան քէօրֆէղինտէն 60 միւ
իւրագ պուլընըր ըմըշ: Մարէ-
շալ Օեամա օրտուսընը շիմալա
իլէրլէթմէքտէ օլուպ, Վլաւի-
վօթօք իլէ Բուսլարըն մու-
խապէրաթընը քէսմէք իսթէյօր:

—Բուս տօնանմալարըն պիր-
լէչմէսի ապրիլ 26 սընտա պէք-
լէնիլիօր:

—Բուս մէնպալարընտան իս-
պար օլընտըղը իւղրէ, ճաքօնլար
Մօնկօլիա թարիգի իլէ ճէօթէ
ճէսթէ շիմալա կիթմէքտէ ի-
միշլէր: ալըն 20 սինտէ 40,000
ճաքօնլը կէչմիշ: ճաքօնլըլար
պու հարէքէթլէրի իլէ Ջիւնի
պի թարաֆլըղընը պօղմուշ օլը-
յօրլար:

—Էնմէն իսթիլալընտան տօ-
լալը Էրտըղտա թէճէմմիւ օլը-
նան մէճլիսի վիւքէլա տէօր-
տիւնճի օրտույը Էնմէն Էօլլա-
մագ իչիւն գարար վէրմիշ մէզ-
քիւր օրտուսըն պիր գըսմը Էօ-
լա շըգմըշ վէ Տրապիզօնա եագ-
լաշմըշ տըր: պիր րուս նագլիէ
վաքօրը անլէրի Էնմէնէ նագլ
իտէճէք իմիշ:

—Արապ ըսեանըն սէրկէրտոսի
Ապու Սաիտին միւքէմմէլ սի-
լահլը 80000 մէվճուտ պէտէվի
ասքէրի օլուպ, արապ պէյլիկի
թէսիսինի իտտաա իթմէքտէ ի-
միշ:

—Էնմէն օսմանլը օրտուսընը
սէր գօմանտանը ասըլարտան
սէրպէսթ պըրագըրուպ, Հօտէյ-
տայա ալտէթ իթմիշ տիրւտէվլէթլէրի
մայէթինէ ինկիլիլլէր պիր
վաքօր թախիս իթմիշլէր:

—Ալպանիտա թէքրար իս-
թիլալ արթմըշ տըր: 2000 իս-
լամ արնապուլար Իբէք շէհրի-

նի պասուպ, միւթէսարըքըն ազ-
լընը վէ Շաքիր բաշանըն թայի-
նի թալէպ իտէյօրլար: Հալ
թէշլիքէլի օլուպ, պիր չօգ խը-
րիսթիան գաթլ օլընմըշ: Աս-
քէրիէ գօմանտանը ասայիշի իպ-
գա իտէպիլմէք իչիւն ասքէր
իսթէմիշ տիրւտէվլէթլէրի թիւրքիա

—Կիրիտի Էննանիտան իլէ
պիրլէշտիրմէք մէսէլէսինտէն
տօլալը ճուսաա կիւնիւ (տիւն)
Բօմատա պէյնիտալլէլ պիր գօն-
ֆէրանս թէճէմմիւ օլընմագ
ըտը: Գարարը գաթի պու գօն-
ֆէրանստան պէքլէնիլիօր: Ա-
սըլար իտտաալարընտա ըսրար
իթմէքտէ տիրլէր:

—ԲՕՍ կազմէթանըն պէյանը
իւղրէ, Մարէշալ Օեամանըն
825000 ասքէրի օլաճագ, պուշ-
լարտան 100 պիւնի Գօրէտտան
Վլաւիվօթօք իւղրէրինէ կիտէ-
ճէք, 150 պիւնի Էօլլարը մուհա-
ֆազա իտէճէք, վէ միւթէպա-
գըսը Մանշուրիտա րուս օր-
տուսընա գարըն պուլընմագտըր:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌԵԱ,	Ապրիլ 23
ՋԱՍԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վալիս	54-60 լիպ. 9.50 / 11.70
Արապա	52-62 լիպ. 9. / 12.10
ԱՐԲԱ,	
Վալիս	100 քիլօ հին 11. / 11. 20
Արապա	42-45 լիպ. 6. / 6. 60
ՆՈՒԼԱՅԱՐԱԿԱ	33/36 լիպ. 5. 20/5. 70
Վալիս	100 քիլօ 10. 60/10. 75
ՋԱՍՈՒԼԵԱ	100 քիլօ — 25-27
Արապա	100 քիլ. 22-24
ՏԱՐԸ	արապա հէքթ. 14-15
ՔՕԼՕԶ	արապա 55-60 լիպ. 10. 50/12
ՄԻՍԻՐ	57-58 լիպ. 7. 20/8. 80
«	100 քիլօ 11. 20 - 11. 90
ՋԱՎՏԱՐ	արապա 7 70 / 8. —
«	100 քիլօ 11. / 11. 50
Կիւնտէ	15-20 վալիս վէ 80 — 100
արապա կէլմէքտէ, վալիս մուսմէլէսի	
Նարօլէն 20 ֆր.	արապա մուսմէլէսի
Նարօլէն 20. 20 :	

ՍԱՐԲԱՅԻՑԷ

Նարօլէն 20, 20 ֆրանք
Օսմ. լիւրաը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա	բիւրոսընտա պագալիլի
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն	
Ֆրանք իլէ :	
ԳԱՀՎԷ	1,95/2 10
Շէֆէր Նէմցէ	80
Շէֆէր քէսմէլ ասնարգ	40.
Բիւրիւն Ֆիլիպէ չուվալը	45 .
» ճաքօն »	35 .
» Ինկիլիլ »	28.50
» Բիլգօն »	50
ԿԱԶ, ասնարգը	9. 30
Ջէթիւն հաղը քիլօ	85.—1
ԳՈՒՐՈՒԻԼԷԼԷԼ	25

Одговорникъ А. Курбетянъ
печатница П. Гаушкель и С-не—Варна